ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

9 սեպտեմբերի 2015 թվականի N 95-Ա

ԶԱՐԶԱՆԴ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ, 161-րդ և 163-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշումը, **կ ա ր գ ա դ ր ու մ եմ՝**

1.Մարզպետի օգնական Զարզանդ Նիկողոսյանին 2015թ. սեպտեմբերի 15-ից տրամադրել 2015 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը և լրացուցիչ արձակուրդը՝ 12 աշխատանքային օր: Աշխատանքի մեջ համարել 01.10.2015թ.

2.Համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ կետի՝ վճարել լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով, տրված արձակուրդային օրերի համամասնությամբ:

3.Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել ամենամյա արձակուրդի վճարումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ.սեպտեմբերի 9
ք. Կապան